ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1965 թ. հոկտեմբերի 7—11-ը Երևանում տեղի ունեցավ գիտության պատմության անդրկովկասյան առաջին կոնֆերանսը։ Կոնֆերանսի նպատակն էր հանրագումարի բերել Անդրկովկասում գիտության պատմության գծով կատարված աշխատանքները, սերտ կապ ստեղծել այդ ուղղությամբ աշխատող գիտնականների միջև, նախատեսել առաջիկա խնդիրները, կոորդինացնելով այդ աշխատանքները և դարձնելով ավելի ևս արդյունավետ ու նպատակասլաց։

Այս տեսակետից ներկա կոնֆերանսը Անդրկովկասում առաջին փորձն էր, և այն բավական մեծ հետաքրքրություն էր առաջացրել գիտության պատմությամբ զբաղվող մասնագետների շրջանում։ Կոնֆերանսին մասնակցում էին շուրջ 300 գիտնականներ՝ անդրկովկասյան հանրապետություններից ու Միության տարբեր քաղաքներից (Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Վիլնյուս, Յարոսլավլ)։

Բացելով կոնֆերանսը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն ասաց. «Մեր ակադեմիան միշտ էլ մեծ նշանակություն է տվել գիտության պատմության հարցերին։ Մենք համոզված ենք, որ կոնֆերանսը ավելի ևս կնպաստի իմացության այդ կարևոր ճյուղի զարգացմանն ու ընդլայնմանը»։

Պլենար նիստում ելույթ ունեցան գիտության պատմության Միջազգային ակադեմիայի պրեզիդենտ Ա. Պ. Յուշկևիչը և գիտության պատմության Միջազգային միության վիցե-պրեզիդենտ Ա. Տ. Գրիգորյանը։ Նրանք խոսելով միջազգային մասշտաբով այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին, մասնավորապես կանգ առան գիտության պատմության բնագավառում Անդրկովկասում կատարվող մեծ աշխատանքների վրա, որի փայլուն ապացույցներից մեկը վերջին տասնամյակում Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի խումբ գիտնականների հաջողությամբ զեկուցումներով հանդես գալն է՝ միջազգային սիմպոզիումներում ու կոնֆերանսներում։

Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Ա. Թոփչիբաշևը զեկուցեց «Գիտության զարգացումը Ադրբեջանում վերջին քսան տարում» թեմայով։ Նա նշեց նաև անդրկովկասյան հանրապետությունների գիտությունների ակադեմիաների համատեղ աշխատանքով բազմաթիվ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող պրոբլեմների լուծման անհրաժեշտությունը։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Գ. Ներսիսյանը իր զեկուցման մեջ շարադրեց այն նվաճումները, որոնք ձեռք են բերել Հայաստանի գիտնականները տարբեր գիտահետազոտական հիմնարկներում։ Զեկուցողը միաժամանակ կանգ առավ այն մեծ խնդիրների վրա, որոնք դրվում են փիլիսոփաների, պատմաբանների ու լեզվաբանների առջև, ավելի ևս ընդարձակելու ուսումնասիրությունները՝ կապված հայկական գիտության ու կուլտուրայի պատմության հետ, սկսած հայ ժողովրդի կազմավորման ժամանակից մինչև մեր օրերը։

Այնուհետև՝ ելույթ ունեցան Դ. Բ. Պետրոսյանը, Վ. Դ. Պարկաձևն և Ի. Կ. Էֆենդիևը, որոնք համապատասխանորեն կանգ առան Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում բնագիտության ու տեխնիկայի պատմության զարգացման հարցերի վրա։ Այդ հարցերով տարբեր ժամանակներում զբաղվել են փոքրաթիվ գիտնականներ, իրարից կտրված ու մեկուսացված։ Վերջին ժամանակներս այդ աշխատանքները նոր թափ ստացան և կոորդինացվեցին հանրապետությունների գիտությունների ակադեմիաներին կից կազմակերպված հատուկ խորհուրդներում։ Որպես խրախուսելի միջոցառում նշվեց, որ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի բնագիտության ու տեխնիկայի պատմության խորհուրդը լույս է ընծայում հատուկ պարբերական, որն իր շուրջն է համախմբել գիտնականների մի ստվար կոլեկտիվ։

Պլենար նիստում հետաքրքրությամբ լսվեց պրոֆ. Ա. Դ. Աբրահամյանի զեկուցումը՝ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի ձեռագիր գանձերի մասին։

Կարևորագույն պրոբլեմի էր նվիրված ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Մ. Կեդրովի զեկուցումը՝ «Էմպիրիկն ու տեսականը գիտության պատմության մշակման մեջ»։

Զեկուցումների շուրջը տեղի ունեցած քննարկմանը մասնակցեցին տարբեր գիտահետազոտական հիմնարկների ու բուհերի գիտնականներ։

Կոնֆերանսում գործում էին գիտության ու տեխնիկայի պատմության մեթոդոլոգիայի, մաթեմատիկայի ու մեխանիկայի, ֆիզիկայի ու աստղագիտության, քիմիայի, կենսաբանության, երկրաբանության, աշխարհագրության, տեխնիկայի, բժշկության ու գյուղատնտեսական գիտությունների պատմության (թվով 10) սեկցիաներ։

Ընդամենը լսվեց 104 զեկուցում, որից 8-ը՝ պլենար նիստում, իսկ 96-ը՝ սեկցիաներում։ Զեկուցումների մեծ մասի շուրջը տեղի ունեցան լայն ու մանրամասն քննարկումներ, մտքերի փոխանակումներ ու բանավեճեր։ Արծարծված հարցերի մի մասը վերաբերում էր բնագիտության ու տեխնիկայի պատմությանը՝ հին ու միջնադարյան շրջանում։ Դրանցից էին Մ. Ա. Կաշկայի ու Ի. Բ. Սելիմխանովի զեկուցումը՝ «Օգտակար հանածոների օգտագործումը Ադրբեջանում հին ժամանակներում», Կ. Ա. Մկրտչյանի ու Ս. Մ. Այվազյանի զեկուցումը՝ «Մեծամորի հնագույն լեռնամետալուրգիական կառույցը», Վ. Կ. Ջալոյանի զեկուցումը՝ «Բնագիտության ու փիլիսոփայության փոխազդեցության հարցը հին Հայաստանում», Դ. Մ. Լոլաձեի զեկուցումը՝ «Առաջին մագնիսա-օդերևութաբանական կայանը Կովկասում», Ս. Տ. Երեմյանի զեկուցումը՝ «Հայկական քարտեզագրության հնագույն հուշարձանը», Մ. Ա. Սուլթանովի զեկուցումը, որը վերաբերում էր Հին Արևելքի ձեռագրերում դեղաբույսերի ու նրանց անվանակոչության մասին եղած տեղեկություններին և շատ այլ զեկուցումներ։

55 զեկուցում վերաբերում էր գիտության տարբեր ճյուղերի զարգացմանը սովետական շրջանում։ Հետաքրքրությամբ լսվեց Լ. Վ. Միրզոյանի զեկուցումը «Աստղաստիրների ուսումնասիրության նշանակությունը կոսմոգոնիայում», ինչպես հայտնի է աստղաստիրները առաջին անգամ հայտնաբերվել ու ուսումնասիրվել են Բյուրականի աստրոֆիզիկական դիտարանում։ Ֆ. Ա. Մելիքովը իր զեկուցման մեջ շարադրելով Ադրբեջանում անասնաբուծության զարգացման հիմնական էտապները, հատկապես ընդգծեց այդ գործում անդրկովկասյան մյուս հանրապետությունների փոխադարձ օգնության մեծ կարևորությունը։ Ա. Ի. Ամատունու և Գ. Մ. Ղարիբյանի զեկուցումը վերաբերում էր տեսական ֆիզիկայի զարգացմանը Հայաստանում, Մ. Ա. Չավադովի զեկուցումը՝ երկրաշափության զարգացմանը Ադրբեջանում և այլն։

Կոնֆերանսի աշխատանքները բավական աշխուժացրին ու հետաքրքրական դարձրին միութենական մյուս քաղաքներից ու հանրապետություններից ժամանած գիտնականների զեկուցումները։ Առանձնապես հետաքրքրական էին պրոֆ. Ա. Պ. Յուշկեվիչի, Դ. Դ. Իվաննիկոյի, Ս. Վ. Պետրովի, Բ. Գ. Կուզնեցովի, Բ. Ի. Սպասկու և այլոց ելույթները։

Պլենար նիստում հաշվետվություններ տրվեցին սեկցիաներում կատարված աշխատանքների մասին։

Կոնֆերանսը, ընդունած որոշման մեջ, անհրաժեշտ համարեց Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի գիտության պատմության մասնագետների համար սիստեմատիկ հրավիրել համատեղ կոնֆերանսներ՝ նպատակ ունենալով իրականացնել ուսումնասիրությունների հաստատուն համագործակցությունը, աշխատանքների կոորդինացումը, արդյունքների ամփոփումը և մոտ ապագայի հեռանկարների մշակումը։

Անդրկովկասյան հանրապետությունների ակադեմիաներին կից բնագիտության ու տեխնիկայի պատմության խորհուրդներին հանձնարարեց նախապատրաստել և 1967 թ. լույս ընծայել գիտության պատմության գծով աշխատություններ՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։ Անհրաժեշտ համարեց ստեղծել գիտության պատմության գծով հատուկ օրգան, որը կմիավորի սովետական բնագիտության ու տեխնիկայի պատմությամբ զբաղվող բոլոր գիտնականներին, անդրկովկասյան հանրապետություններում գիտության պատմությանը վերաբերող մատենագիտական տվյալների պարբերական հավաքումը, մշակումն ու հրատարակումը։

Բ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ